

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

- | | |
|---------------|--|
| Հ. Հակոբյան | - ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ |
| Է. Նալբանդյան | - ՀՀ արտաքին գործերի նախարար |
| Կ. Ճճմարիտյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Ա. Աշոտյան | - ՀՀ կրթության և գիտության նախարար |
| Ս. Կարապետյան | - ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Ե. Զախարյան | - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարներ նախարար |
| Ա. Մուրադյան | - ՀՀ առողջապահության նախարար |
| Ա. Ասատրյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար |
| Գ. Բեգլարյան | - ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Ն. Սարգսյան | - ՀՀ քաղաքաշինության նախարար |
| Հ. Պողոսյան | - ՀՀ մշակույթի նախարար |
| Ս. Պապյան | - ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ |
| Վ. Տերտերյան | - ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ |
| Վ. Միրումյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Է. Կիրակոսյան | - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն |
| Կ. Դանիելյան | - «Հանուն մարդկային կայուն զարգացման սոցիալիզմ» ՀԿ-ի նախագահ |

Հ. Սարգսյան	- «Տապան» էկո-ակումբ» ՀԿ-ի նախագահ
Ե. Մանվելյան	- «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ
Ա. Միրզոյան	- «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Ս. Ադամյան	- «Թոչնասերների կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

Բ. Բուզետտո	- ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցիչ
Գ. Դումանյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ
Կ. Մարգարյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ա. Հովակիմյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Յու. Պողոսյան	- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Վ. Կաժոյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Ա. Ասատրյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի խորհրդատու
Ա. Մարգարյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ
Ս.Քարտաշյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Մ. Կորխմազյան	«Հետ-2015 գործընթաց» ծրագրի փորձագետ
Լ. Սարգսյան	- «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Ա. Ավանեսյան	ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցչի օգնական
Ք. Կարապետյան	- թարգմանիչ

1. «Ռիո+20» գագաթաժողովի հանձնառությունների իրականացման գործընթացը

(Կարինե Դանիելյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանի զեկույցը՝ «Ռիո+20» գագաթաժողովի հանձնառությունների իրականացման գործընթացի մասին.

2) ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին՝ համակարգել ՄԱԿ-ի 2015 թվականի սեպտեմբերին կայանալիք գագաթաժողովի համար անհրաժեշտ՝ հազարամյակի զարգացման նպատակների կատարման Հայաստանի առաջընթացի վերաբերյալ զեկույցի նախապատրաստման աշխատանքները.

3) ՀՀ կառավարության աշխատակազմին՝ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին ներկայացնել «ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 1147-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ «Հետ Ռիո +20» գործընթացը կանոնակարգող միջգերատեսչական աշխատանքային խումբն անվանափոխելու և դրա աշխատանքները «Հետ 2015» օրակարգի կայուն զարգացման նպատակներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

2. «Հետ - 2015» գործընթացի մասին

(Էդվարդ Նալբանդյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ արտաքին գործերի

նախարար Էդվարդ Նալբանդյանի զեկույցը «Հետ - 2015» գործընթացի մասին:

3. ՀՀ կայուն զարգացման ազգային խորհրդի քարտուղարի ընտրություն

(Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ կայուն զարգացման ազգային խորհրդի քարտուղարի պաշտոնում վերընտրել «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ